

Կշեռքի նժարին ոտք դնելը մեղք է համարուում:

Արհեստաւորի դազգահի, սալի վրայ նստելը մեղք է համարուում, «խէշն ու բարաքէն» կը պակսի:

Բոյախոյու կարասի ներկերը փշանալիս՝ մի մեծ սուտ են խօսում, որպէսզի ներկերը՝ կրկին լաւանան, այս պատճառով էլ մի անհաւատալի, սուտ բան լսելիս ասում են. «Կարաս աւաւրի»:

Վախեցածին բժշկելու համար անխօս տանում են մի նոր թաղուածի կամ սպանուածի գերեզմանի վրայ ոտներն ու ձեռները լուանում և ջրի ամանը կոտորում գերեզմանի վրայ: Վերադարձին կարող են խօսել, իսկ գնալիս՝ ոչ:

ԿԱՄԱՒՈՐ ՊԱՍԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Նոր-Բայազէտի հին սերունդը մեծ ջերմեանդուլթեամբ պահում էր ոչ միայն շարթապասերը, այլև չորեքշաբթի և ուրբաթ օրերը. այժմեան սերունդը այնքան մեծ կարևորութիւն չի տալիս, թէև խեղճը սաստիկ աղքատութեան պատճառով ուտիս օրերն էլ է պահ պահում, որովհետև կերածը ցամաք հաց է միայն: Պասերից Մննդեանը, ս. Սարգսինը, (Առաջաւորաց), Մեծ պասի առաջին և վերջին շաբաթները, Համբարձմանը, Վարդավառինը և Աստուածածնի այնուամենայնիւ պահում են:

Բացի այս օրինական պասերից՝ գլխաւորապէս պատահանայք կամաւոր պասեր ևս պահում են, սակայն ոչ բոլորը, այլ ով կամենայ, որովհետև պահող պահողաց ա»:

Այսպիսի կամաւոր պասերից նշանաւոր են.

Մ. Կարապետի պասը.—Տևում է Համբարձումից մինչև Վարդավառ. միայն շաբաթ և կիրակի օրերը ուտում են ուտիսի կերակրներ, բայց ոչ մտեղէն: Այս պահեցողութեան ընթացքում նաև ծամոն չեն ծամում, մեղք համարելով:

Վարդավառի «Մթորք» պաս.—Պահում են Վարդավառի պասի նախընթաց շաբաթը, հետևապէս և՛ Վարդավառի պասի մի շաբաթուայ փոխարէն՝ երկու շաբաթ:

Ս. Աստուածածնի պասը.—Պահում են նոյն պասի նախընթաց շաբաթը ևս:

Ս. Վարդանի պասը.—Պահում են բարիկենդանի վերջին շաբաթի հինգ օրը և շաբաթ օրը ուխտ գնում Ալափարսի ս. Վարդանի վանքը: Այս պասը գլխաւորապէս պահում են յօդացաւ (քամի) ունեցողները՝ ս. Վարդանի վանքից բժշկութիւն հայցելու յուսով:

Նաև շատերը ուխտ գնալուց առաջ մի շարաթ պաս են բռնում:

Բացի կամաւոր պատերից՝ կան և կամաւոր տօներ, և սրանք ոչ թէ բացառապէս կանայք, այլ նաև տղամարդիկ են պահում: Այսպիսի տօներին ևս ժողովուրդը «կիրակի» է անուանում: Սրանցից նշանաւոր են.

Կարկաթի կիրակի.—Պահում են, որպէսզի կարկուտը չխփէ արտերին: Ընկնում է ս. Թադէոս առաքեալի տօնի օրը:

Թալալօցի կիրակի.—Պահում են որպէսզի ուշագնաց չլինեն. ընկնում է մեծ պասի առաջին շարաթուայ շարաթ օրը:

Օձի կիրակի.—Մի որևէ օր յատկապէս օձի համար կիրակի են պահում, որպէսզի օձերը չկծեն: Նոյն նպատակով էլ Մեծ պասի Աւագ շորեքշարթի օրը ուտում են թթու մախոխ, որ կոչւում է Օձի թթու:

Հաւիտրի կիրակի.—Չորեքշարթի և ուրբաթ երեկոները՝ լոյս հինգշարթի և շարաթ զործ չեն անում, որպէսզի հաւկուր չլինեն.—Երեկոյեան դէմ և գիշերը տեսնելու կարողութիւնից չըզրկուեն:

